# Նորայր Մանվելյան

## Հանդիպում պուրակում

Սուրճի համը ծխախոտի բիրտ մխով

Ամռան բուրմունքն էր փորձում զսպել,

Երկու մարդ՝ անհայտ ճակատագրով,

Որոշեցին պուրակում իրար կողք նստել:

Մեկը ջահել՝ գալիքի ծածկոցը մտքին,

Մյուսի երեսին՝ տպված իր անցյալը,

Բարև ասաց պապը հարևան ջահելին

Եվ բարև լսեց նա ի պատասխան:

Միմյանց լեզու չգիտեին նրանք,

Խոսեցին գալարվող ծխի լեզվով,

Հնաց ծերունին, հանդիպեցին նրանք

Հայացքով՝ հոգու խորք հասնող:

Պատանին զգաց անցյալի հովվիկը,

Սրտում միայնակ, նա գտավ մի պատրանք՝

Իր պապը կանգնած, ուղղում էր շապիկը՝

Թոռին ասելով՝ «պահիր երազանք«:

Եվ թոռը հիշեց իր պապի ձեռքերը՝

Դժնի կյանքից դողդողացող,

Բայց չէին դողում ծերունու ձեռքերը,

Երկրորդ ծխախոտը զգուշորեն այրող:

Հավաքեց ջահելը հոգու իր կրակը

Ու ասաց՝ «ես հայ եմ, Հայաստան երկրից»:

Կրկնեց՝ «Հայաստա՞ն», հույն օտար պապը

Ու անհետացավ տեսադաշտից:

Թոռան աչքերում՝ պապին ողջունելը

Դաշված օրերում անդառնալի,

Անցորդ պապի հեռանալը տեսնելը

Սիրտն ալիքեց պանդուխտ ջահելի: